

14/2017



## Հետեւողական քայլերով՝ դեպի մաքուր Հայաստան, մաքուր հայրենիք

«Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում  
մաքրման աշխատանքները իրականցվել են ՀՀ  
բնապահպանության նախարարության աշխատակազմի  
տարածքային բոլոր ստորաբաժանումների կողմից:

ՀՀ բնապահպանության նախարարության ներքո գործող  
բնության հատուկ պահպանվող բոլոր տարածքներում (ԲՀՊՏ-ներ) և դրանց հարակից հանայնքների մերձակայքում, որոնք ընդգրկում են Հայաստանի բոլոր մարզերը, իրականացվել են նաքրման և բարեկարգման  
աշխատանքներ: Համապետական շաբաթօրյակին մասնակցել են ոչ միայն ԲՀՊՏ-ների, այլև նախարարության  
աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների  
աշխատակիցները:



## • Հետևողական բայլերով՝ դեղի մաքուր հայաստան, մաքուր հայրենիք

Սկիզբ՝ էջ 1/



«Սևան» ազգային պարկի աշխատակիցներն աղբից մաքրել են հանրային երեք լողափ, պարկի արգելոցները, արգելավայրերը, ռեկրեացիոն և տնտեսական գոտիները: ՀՀ Սյունիքի մարզի «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում մաքրվել են «Սոսու պուրակ» արգելավայրը, «Շիկահող» արգելոցի ջրվեժի և նախնադարյան կամրջի, այցելումերի կենտրոնի հարակից տարածքները, «Արևիք» ազգային պարկի Բողաքար արգելավայրի, Նյուրքի աղբյուրի և Ծվանիձոր համայնքին հա-

րակից տարածքներ, «Զանգեզուր» արգելավայրի Նոր Աստղաբերդի տեղամասը: «Արփի լիճ» ազգային պարկի՝ ի աշխատակիցները էլ մաքրել են վարչական շենքի տարածքը, Զորակերտ, Բերդաշեն, Ծաղկուտ գյուղերի և Արփի լճով անցնող սահմանաեզրի միջև գտնվող տարածքներ: «Խոսրովի անտառ» պետական արգելոցում մաքրվել են «Խոսրով», «Խաչաձոր», «Գառնի», «Կաքավարերդ» տեղամասերը, «Խոր-Վիրապ» պետական արգելավայրը, «Գոռավանի ավագուտներ» պետական արգելավայրը: Տավուշի մարզի Կողը գյուղից մինչև «Զիկատար» պետական արգելավայրի տարածք տանող ճանապարհը, «Զիկատար» ուսումնական կենտրոնի հարակից և մոտակայքում գտնվող լճակի տարածքները մաքրել են ուսումնական կենտրոնի աշխատակիցները: «Դիլիջան» ազգային պարկի անձնակազմը մաքրել է Հաղարծին վանական համալիր տանող ճանապարհին կից գտնվող տաղավարները, Զուխտակ վանքեր տանող ճանապարհին կից գտնվող տաղավարների հարակից տարածքները, Դիլիջան-Զուխտակ վանքեր մատուռ-Շամախյան էկոերթուղին: Մաքրման աշխատանքներ են տարվել նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի Ենթակայության տակ գտնվող «Ջրվեժ» անտառապարկում, «Էրեբունի» պետական արգելոցում, Ստեփանավանի «Սոճուտ», «Իջևանի» և Բերդի «Սորաններ» դենդրոպարկերում: Համապետական շաբաթօրյակին միացել են նաև Բնապահպանական պետական տեսչության տարածքային ստորաբաժանումների աշխատակիցները:



## ՀՀ բնապահպանության նախարարությունը կոչ է անում միավորել բոլորիս ուժերը՝ Հայաստանի բնական լանդշաֆտներում, պատմամշակութային վայրերի և կոթողների հարակից տարածքներում, բնակավայրերում և ճանապարհաեզրերին կուտակված աղբից մաքրելու գաղափարի շուրջ՝ նպատակադրելով բնության և պատմամշակութային հուշարձանները Հանրապետության քաղաքացիների ու զբոսաշրջիկների համար առավել գրավիչ դարձնել: «Մաքուր Հայաստան» ծրագրի համապետական շաբաթօրյակի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի աշխատակիցները մաքրման աշխատանքներ կիրականացնեն «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի «Հավուց թառ» վանական համալիրի հարակից տարածքում: Նոյն օրը միջոցառումներ կիրականացվեն նաև ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող բոլոր բնության հատուկ պահպանվող տարածքներում և հարակից հատվածներում:





## Նախարարության աշխատակազմը «Մաքուր Հայաստան» ծրագրի մեջնարկը տվեց Խոսրովի անտառից

 բնապահանության նախարարության բոլոր ստորաբաժնումները «Մաքուր Հայաստան» ծրագրի մեջնարկին կազմակերպած համապետական շաբաթօրյակի շրջանակներում մաքրման աշխատանքներ են իրականացրել բնության հատուկ պահպանվող բոլոր տարածքներում և դրանց հարակից համայնքների մերձակայքում: ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի աշխատակիցները նախարար Արծվիկ Սինասյանի գլխավորությամբ մաքրման աշխատանքներ են իրականացրել «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հավուց թառ վանական համալիրի հարակից տարածքում: Պատասխանելով լրագրողների հարցերին՝ նախարար Արծվիկ Սինասյանը նշել է, որ ՀՀ բնապահպանության նախարարությունն առաջ էր քաշել



MINISTRY OF NATURE PROTECTION  
MINISTÈRE DE LA PROTECTION DE LA NATURE  
MINISTERIO DE PROTECCIÓN DEL MEDIO AMBIENTE



«Հարավ-հյուսիս անաղբ Հայաստան» գաղափարը, որը հավանության արժանացավ ՀՀ կառավարությունում և ՀՀ վարչապետի հանձնարարությամբ մշակվեց համապատասխան ծրագիր, որն այսօր իրականացվում է: Ըստ նախարարի՝ այս նախաձեռնությունը մեկանգամյա ակցիա չէ, այն լինելու է շարունակական, իսկ ամենակարևորը՝ գաղափարի խորն ընթանումն ու վերջնական արդյունքը: Այս, դառնանք Մաքուր Հայաստան բոլոր առումներով: Դրա համար նախարարն առաջնային է համարել էկոլոգիական կրթության նիշոցով հասարակության բոլոր շերտերի մոտ բնապահպանական գիտակցության և աշխարհայացի ձևավորումը:



## Նոր նշանակում



**Երիկ Գրիգորյանին Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ նշանակելու մասին**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով սահմանված կարգի 121-րդ կետի 6-րդ ենթակետը՝

Երիկ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ:

ՀՀ վարչապետ  
Կարեն Կարապետյան



## Հոգսերը թեթեւանում են, երբ համատեղվում են զանքերը

Հայապահպանության նախարարությունում կայացել է բնապահպանության նախարարի պաշտոնակատար Արծվիկ Մինասյանի հերթական հանդիպումը բնապահպանական խնդիրներով մտահոգ քաղաքացիների հետ: Նախորդ հանդիպման ժամանակ պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որպեսզի բնապահպան-երիտասարդները հիմնեն բնապահպանական խորհուրդ, որը կհամագործակցեր նախարարության հետ՝ նպատակ ունենալով աջակցել բնապահպանական խնդիրների լուծմանը: Այս երկրորդ հանդիպումը՝ փաստացի խորհրդի հանդիպումն էր նախարարի հետ, որին մասնակցել են նաև նախարարության տարրեր ստորաբաժնումների պատասխանատուներ և Կովկասի բնության հիմնադրամի /CNF-ի/ ազգային համակարգող Արման Վերմիշյանը: Քննարկման առանցքում Գոշ Ղճին վերաբերող հարցերն էին: Արծվիկ Մինասյանը ողջունել է երիտասարդների հետ հերթական հանդիպումը՝ նշել, որ համատեղ զանքերով շատ հարցերի լուծումներ կգտնեն և կարևորել է ննան քննարկումները, որոնք հնարավորություն կտան նաև այլ տեսանկյունից անդրադառնալու խնդրահարույց հարցերին: Այնուհետև նախարարը ներկայացրել է այն աշխատանքները, որոնք նախատեսվում են իրականցնել Գոշ Ղճի տարածքում: Արծվիկ Մինասյանը մտահոգություն է հայտնել, որ եղանակային պայմանները թույլ չեն տալիս արագ և նախօրորդ հայտարարված ժամանակացույցին համապատասխան կատարել ՂՃի շրջակայքի մաքրումը: Ակիամերձ տարածքների տիղմից մաքրման և բարեկարգման բոլոր աշխատանքները իրականացնելու է «Դիլիջան» ազգային պարկը՝ «Վեճդոյ» ընկերության միջոցների հաշվին: «Անհրաժեշտ է



առնվազն երեք ոչ անձնական օր և լճի ափամերձ տարածքների մաքրումը հնգօրյա ժամկետում ավարտին կհասցվի», - ասել է նախարարը: Երիտասարդների մտահոգություններին, թե որքանով է խախտվել լճի էկոհամակարգը, մանրամասնորեն անդրադարձել է CNF-ի ազգային համակարգող Արման Վերմիշյանը: Ըստ նրա, առաջին հայացքից պատկերը ցավալի է ու էրթելի հաճույք չի պատճառում. «Բայց, բարեբախտաբար, էական վնաս չի հասցել և լիճն ունի ինքնավերականգնման հզոր ռեսուրս ու արագ կվերականգնվի»: Բնապահպան-փորձագետն անդրադարձել է Գոշի էկոհամակարգի պահպանն ուղղված մի շարք քայլերի, այդ թվում նշել լճում պարբերաբար մոնիթորինգ իրականացնելու անհրաժեշտությանը: Շուրջ երկուսուկես ժամ տևած քննարկման ընթացքում բարձրացվել են ոլորտին առնչվող բազմաթիվ այլ հարցեր, այդ թվում էկոտուրիզմի զարգացման, էկոկրթական դաստիարակության, ոլորտում օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության և այլն: Ամփոփելով քննարկումը՝ նախարարի պաշտոնակատար Արծվիկ Մինասյանը նշել է, որ հանդիպումները պարբերական են լինելու և դրանք նպատակառուղյակելու են նրան, որ քայլ առ քայլ բարեկիուսվի ոլորտն այնպես, որ պեսզի և տնտեսական, և բնապահպանական լուծումների համադրումով էկոհամակարգային զարգացման համար գտնվի լավագույն տարբերակը:

## Մեր ոլորտում կադրերը պետք է լինեն պրոֆեսիոնալ, հայրենասեր եւ պատասխանատու մարդիկ



**Մ**այիսի 31-ին ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնակատար Արծվիկ Սինասյանը նախարարության աշխատակազմին է ներկայացրել նախարարի նորանշանակ առաջին տեղակալին և մարթել արդյունավետ գործունեություն: Նա հույս հայտնել, որ պարուն Պապյանի հարուստ աշխատանքային փորձը կներդրվի գերատեսչության առաջ դրված խնդիրների լուծման մեջ: «ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալի փոփոխության առաջարկը եղել է Սիմոն Պապյանի կողմից: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել պարոն Պապյանին՝ երկարաժամկետ աշխատանքի համար և նաև խնդրել, որ նա շարունակի իր գործունեությունը նախարարությունում, քանի որ մենք ունենք շատ սկզբունքային և կարևոր մի համակարգի՝ պետական մոնղությունինքի կայացման խնդիր: Խնդրել եմ, որ նա զբաղեցնի նոր ծևակվորված կառույցի տնօրինի պաշտոնը և մենք, որպես մի ամբողջություն, մեկ թիմ, կկարողանանք այս համակարգը կայացնել: Ուզում եմ ներկայացնել նաև պարոն Երիկ Գրիգորյանին, որին ձեզնից շատերը լավ ճանաչում են: Ասեմ նաև, որ պարոն Երիկ Գրիգորյանի՝ նախարարի առաջին տեղակալ նշանակելու նախաձեռնությունը եղել է մեր կողմից, որին դրական ընթացք է տվել ՀՀ նախագահը և վարչապետը, ինչի համար ես շնորհակալ եմ նրանց: Ցանարում եմ, որ պարոն Գրիգորյանն իր փորձը, գիտելիքները կարող է ծառայեցնել մեր ոլորտի զարգացմանը և հզորացմանը: Մեզ այսօր ո՛ւ ուշի պես անհրաժեշտ են խորքային ռեֆորմներ թե՛ քաղաքականության մեջ, թե՛ կադրային ոլորտում ու ենթահամակարգերում: Այս անձինք, որոնք չեն բավարարի մեր պահանջներին, դրանք են՝ հայրենասիրությունը, պրոֆեսիոնալիզմը, պատասխանատվությունը, գոնե ին պաշտոնավարման ժամանակահատվածում այս համակարգում տեղ չեն ունենա և պետք է իրենց տեղը զիջեն այն մարդկանց, ովքեր բավարարում են այդ սկզբունքներին: Սա լինելու է մեր քաղաքականության առանցքային հիմնական ուղղությունը: Ի վերջո, ոլորտը մենք պետք է դարձնենք օրինակելի՝ ժամանակակից ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության կարևոր օլյակներից մեկը: Երկար տարիների ընթացքում նաև ձեռք կատարել են աշխատեղ քննարկել մինչ նշանակումը: Ե. Գրիգորյանը նկատել է, որ նախկինում, երկար տարիներ աշխատելով բնապահպանության նախարարությունում, լավ փորձ է ձեռք բերել, սակայն ժամանակերը փոխվում են և շրջակա միջավայրի կառավարման ոլորտում ևս փոխվում են խնդիրներն ու նոտեցումները: «Պետք է աշխատենք շատ արդյունավետ և լուծենք մեր առջև դրված բոլոր խնդիրները: Մեր բոլորի գործողությունների նպատակը պետք է լինի զարգացող, ավելի լավ հայաստան ունենալը», - ասել է. Գրիգորյանը:



ավորվել և արմատավորվել են երևոյթներ, որոնք ընդունելի չեն և որոնք մենք պետք է կազմաքանդենք ու փոխենք: Մեր պետականության ուժեղացման այս կարևորագույն շրջափուլում մենք պետք է ամբողջությամբ դառնանք պետական համակարգի հիմնական դերակատարներից մեկը: Իսկ շրջակա միջավայրի պահպանության վերականգնման և բարելավման, բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման սահմանադրական նորմը՝ պրակտիկ քաղաքականության գործողությունների վերածելու հարցում, մեր նախարարությունը պետք է լինի առաջամարտիկ»,- նշել է Արծվիկ Սինասյանը: Այնուհետև, նախարարն ասել է, որ ուժեղ թիմով, կկարողանան առաջ տանել այն գաղափարները, ծրագրերը և ուղղությունները, որոնք նորանշանակ նախարարի տեղակալի հետ առիթ է ունեցել համատեղ քննարկել մինչ նշանակումը: Ե. Գրիգորյանը նկատել է, որ նախկինում, երկար տարիներ աշխատելով բնապահպանության նախարարությունում, լավ փորձ է ձեռք բերել, սակայն ժամանակերը փոխվում են և շրջակա միջավայրի կառավարման ոլորտում ևս փոխվում են խնդիրներն ու նոտեցումները: «Պետք է աշխատենք շատ արդյունավետ և լուծենք մեր առջև դրված բոլոր խնդիրները: Մեր բոլորի գործողությունների նպատակը պետք է լինի զարգացող, ավելի լավ հայաստան ունենալը», - ասել է. Գրիգորյանը:

# ՄԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԹԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐ- ԱԾ ԽԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ԴԻՄԱԳ ԻՎԱՅՐ- ԼԵԼ Է ՉՈԼՔ 666.0 հազ. դրամի ՉՊԶԱԿԱ ՄԻՋԱՎԱյՐԻՆ ԻՎԱՍՎԱԾ ՎՆԱՍ



Բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կողմից 22.05-26.05.2017 թթ. ժամանակահատվածում իրականացված շրջայցերի, ԲՊՏ վարույթին հանձնված գործերի ըննության և հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերված խախտումների արդյունքում կայացվել է 760,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 11 որոշում և հաշվարկվել 666,0 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին իվացված վնաս: Մասնավորապես՝

## Ապօրինի որսի իրականացման համար՝

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 30,0 հազ. դրամ գումարով,

Առջրավունք է 435 հատ (81,0կգ) «սիդ» տեսակի ծովկ, 9,5 կգ խեցգետին, 2 հատ խեցգետնառսիչ, 3 հատ ձկնորսական ցանց, որից՝ Գեղարքունիքի տարածքային բաժինը «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի հետ համատեղ իրականացրած ստուգայցերի ընթացքում առգրավել է (տիրազուրկ)` 435 հատ (81,0կգ) «սիդ» տեսակի ծովկ, 182 հատ (9,5կգ) խեցգետին, 3 հատ ձկնորսական ցանց, 2 հատ խեցգետնառսիչ: Սիդ տեսակի ծովկն օրենքով սահմանված կարգով հանձնվել է Սևանի թիվ 1 «Բողոք», թիվ 4 «Գալիք», թիվ 3 «Նեքիաբ» մանկապարտեզներ, «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինստերնատ» ՊՈԱԿ և «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ: Խեցգետինները կենդանի վիճակում բաց են բողնվել Սևանա լիճ, իսկ ցանցերը և խեցգետնառսիչներն ի պահ են հանձնվել «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի պահեստ: Արարատի տարածքային բաժնն իրականացրել է վարույթ, որի արդյունքում մեկ ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 30,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում:

## Փայտանյութի ապօրինի տեղափոխում՝

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 100,0 հազ. դրամ գումարով և հաշվարկվել է 666,0 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին իվացված վնաս, որից՝

Արագածոտնի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված փայտանյութի ապօրինի տեղափոխման 1 դեպքի համար կայացվել է 100,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում և հաշվարկվել է 54,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին իվացված վնաս: Տապուշի ոստիկանության երկու գրության հիմնան վրա տարածքային բաժնի կողմից իրականացվել է ավտոմեքենայում փայտանյութի զննման աշխատանքներ, կազմվել է մասնագիտական եզրակա-

ցուրյուն, հաշվարկվել է ընդհանուր 17 խմ փայտանյութ՝ 612,0 հազ. դրամի վնաս: Գործը հանձնված է իրավապահմերին:

**Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու համար՝**

Կազմվել է վարչական տուգանքի 6 որոշում՝ 420,0 հազ. դրամ գումարով, որից՝

Արարատի տարածքային բաժնի կողմից 1 տնտեսվարողի նկատմամբ կայացվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում: Երևանի տարածքային բաժնի կողմից 5 տնտեսվարողի նկատմամբ կայացվել է 370,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 5 որոշում:

## Մթոլորտի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 50,0 հազ. դրամ գումարով, որն է՝

Շիրակի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված առանց անբարփակ ծածկոցի ավագի տեղափոխման 1 դեպքի համար մեկ ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում:

## Ցողերի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 80,0 հազ. դրամ գումարով, որն է՝

Արմավիրի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հայտնաբերված մեկ գործով կայացվել է 80,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության բացակայության համար

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 80,0 հազ. դրամ գումարով, որն է՝

Գեղարքունիքի տարածքային բաժնի և «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի հետ համատեղ կազմվել է առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացության գործունեություն իրականացնելու վերաբերյալ արձանագրություն, իրականացվել է վարչական վարույթ: Իրավախախտի նկատմամբ կիրառվել է 80,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում:

Ընդհանուր առմանք ԲՊՏ կիրառված պատժամիջոցներից նշված ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 0,5 մլն. դրամ գումար:

## ՀՀ բնապահպանության նախարարի ուղերձը կենսաբազմագանության միջազգային օրվա առթիվ

Դարձելի հայրենակիցներ

Մայիսի 22-ը աշխարհի բազմաթիվ երկրների հետ միախն Հայաստանը նշեց կենսաբազմագանության միջազգային օրը: Կենսունակ էնդիամակարգերը և կենսաբազմագանությունը մարդկության գոյության կարևորագույն նախապայմաններից են, որոնք ընծեռում են հասարակության զարգացման և տնտեսական աճի լայն հնարավորություններ: Համաշխարհային տնտեսության թրիչքային աճի ներկայի տեսակերն առաջնային հարթակ են մնում կենսաբազմագանության պահպանության խնդիրները: Կենսաբազմագանության պահպանության առաջնայնությունն ընդգծելու նպատակով 1993 թ. ՍՎԿ-ն ընդունել է «Կենսաբազմագանության մասին» կոնվենցիան, որը ստորագրել է աշխարհի պետք քան 168 երկիր: Հայաստանի Հանրապետությունը՝ կարևորելով միջազգային հանրության նախաձեռնած գործողքացը, 1993 թ. նույնպես վավերացրել է նշված կոնվենցիան և ստորագրել կենսաբազմագանության հետ կապված մի շարք բնապահպանական միջազգային համաձայնագրեր ու արձանագրություններ՝ իր վրա վերցնելով պարտավորություններ: Վերջիններիս իրականացումը նպատակադիր է շրջակա միջավայրի և Հայաստանի հարուստ



կենսաբազմագանության արդյունավետ պահպանությանը: «Կենսաբազմագանության մասին» կոնվենցիան Հայաստանը վավերացրել է 1993 թ.-ին՝ երկրի անցումային շրջանի առավել ժամանակահատվածում, երբ գրկված էր կենսապահովման տարրական միջոցներից: Սակայն, արդեն այդ ժամանակ գերակայող էր այն գաղափարը, որ Հայաստանի զարգացումը մեծապես կախված է կենսառեսուրսների առկայությունից, որոնք ընդերքի պաշարների հետ հավասարապես, երկրի համար ռազմավարական նշանակություն ունեն:

## Ծնորհակալագիր ՀՀ բնապահպանության նախարարությանը



«Արևորդի» միջազգային բնապահպանական փառատոնի համակարգող կազմակերպության՝ «Վայրի բնության և մշակության արժեքների պահպանության հիմնադրամի» կողմից ՀՀ բնապահպանության նախարարությանը շնորհվել է «Ծնորհակալագիր» «Արևորդի» միջազգային բնապահպանական 6-րդ փառատոնին գնահատելի ներդրման և աջակցության համար:

## Ժուրնալիստների «Ասպարեզ» ակումբի հայտարարության հիման վրա ՀՀ բնապահպանության նախարարությունում հարուցվել է վարչական վարույթ

ՀՀ բնապահպանության նախարարությունում ուսումնասիրվել է ժուրնալիստների «Ասպարեզ» ակումբի 2017 թվականի մայիսի 16-ի՝ «ՀՀ ԲՆ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Վ. Գուլանյանի կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջի խսիրտման մասին» հայտարարությունը (դիմումին պատասխանելու օրենքով սահմանված ժամկետները չպահպանվելու վերաբերյալ), ինչի կապակցությամբ

«Վարչարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Վարչական վարույթի բազմակողմանիությունը և օրյեկտիվությունն ապահովելու նպատակով 2017 թվականի հունիսի 1-ին ժամը 12:00-ին «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լ. Բարսեղյանը հրավիրվել է ՀՀ բնապահպանության նախարարություն՝ լսնանը մասնակցելու համար:

## Հրազդան համայնքում 7100 տոննա աղտոտված հողը Նուբարաշենից չի տեղափոխվի ժամանակավոր պահեստ

Հրազդան քաղաքի մի շարք հասարակական կագծակերպություններ դիմել էին ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանին, ՀՀ բնապահպանության և արտակարգ իրավիճակների նախարարներին՝ իրենց մտահոգությունը հայտնելով Գլոբալ էկոլոգիական Ֆոնդի (ԳԵՖ) ֆինանսավորմամբ և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) աջակցությամբ իրականացվող «Ժամկետանց պետական հայտնելու պահարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕՍ) աղտոտված տարածքների աղտագերծում՝ քիմիկաների անվտանգ կառավարման միջոցառումների շրջանակներում» իրականացվող ծրագրի առնչությամբ, որով նախատեսվում է Հրազդան քաղաքի հարակից տարածքում Նուբարաշենի թունաքիմիկաների թափոնների ժամանակավոր գերեզմանոցի վտանգավոր թափոնների պահեստավորման և կառավարման ազգային կենտրոնի ստեղծում՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ: ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի հանձնարարությամբ նախարարի տեղակալ և ծրագրի համակարգող Խաչիկ Յակոբյանի մոտ տեղի է ունեցել քննարկում, որին մասնակցել են Հրազդան քաղաքի «Քաղաքացիական նախաձեռնության» անդամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, հանայնքապետարանի պաշտոնյաներ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան ստորաբաժնումների ղեկավարներ, ծրագրին իրականացնող աշխատանքային խմբի և կենտրոնի կառուցման նախագծային աշխատանքներն իրականացնող «Էլեկտրոնային գործառնություններ» ՓԲԸ-ի ներկայացուցիչները: ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Յակոբյանը, շնորհակալություն հայտնելով հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին քաղաքացիական ակտիվություն դրսերելու համար, տեղեկացրել է, որ Վերջիններիս պահանջով արդեն նախնական փուլում ծրագրի կառավարման խորհրդի որոշմամբ նախկինում նախատեսված 7100 տոննա աղտոտված հողը Նուբարաշենից չի տեղափոխվի ժամանակավոր պա-



հեստ, այլ կվճասազերծվի տեղում: Փոխնախարարը հավաստիացրել է, որ հետագայում էլ ծրագրին իրականացնող խումբը կղիտարկի և լուծում կտա ռիսկային ցանկացած խնդրի: Քաղաքացիական նախաձեռնության նեկայացուցիչները մտահոգություն են հայտնել, որ կայուն օրգանական աղտոտիչների պարունակող թունաքիմիկատների պահեստը կարող է վտանգ ներկայացնել տեղի բնակչության համար՝ խոչընդոտելով գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Նախատեսված տարածքը շրջապատված է սեփականաշնորհված հողատարքներով և այնտեղով անցնում են նաև մակերևության ջրեր: Նախարարի տեղակալ Խաչիկ Յակոբյանը հայտնել է, որ քանի դեռ նախագծող ընկերությունն օրենքով սահմանված կարգով նախագիծը ներկայացրել, որում ամրագրված կլիմեն առաջարկվող լուծումները՝ հնարավոր չեն մասնագիտական քննարկում կազմակերպել հնչած մտահոգությունների վերաբերյալ: Նախարարի տեղակալը հավաստիացրել է, որ նախագիծն օրենքով սահմանված կարգով կղրվի հանրային քննարկման, որի ժամանակ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարտահայտեն իրենց կարծիքները և մասնագիտական դիտարկման կենթարկվեն հնչած մտահոգություններն ըստ էության: Նա հավաստիացրել է, որ թունաքիմիկատների փաթեթավորումը և պահպանումը կատարվելու է միջազգային չափանիշներին համապատասխան և բացառվելու են կայուն օրգանական աղտոտիչներ պարունակող թափոններից եկող բոլոր ռիսկերը, ինչը դրված է ծրագրի գաղափարախոսության հիմքում: Այս լինելու է միջազգային չափանիշներին համապատասխան ժամանակավոր պահեստարան, որտեղ պահվող ժամկետանց թունաքիմիկատները կարտահանվեն արտերկիր՝ ոչնչացնալ:

**Նախագիծը՝ Արծուն Պեղանյանի**

**Խմբագիր՝ Սանվել Սկրչյան**

**Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի**

**Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կատերի վարչության**

**Հեռախոս՝  
011 818 517**